ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ

31 Մարտի 2018թ.

Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ և

կից ծանոթագրություններ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ֆինանսական արդյունքների մասին
«31» Մարտի 2018 թ.

«ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 13
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	01/01/2018 - 31/03/2018	01/01/2017 - 31/03/2017
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	2,788,064	6,100,757
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	(1,176,423)	(4,044,675)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		**1,611,641**	**2,056,082**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	450,541	245,282
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(106,633)	(15,549)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		**343,908**	**229,733**
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	5	870,415	45,574
Այլ գործառնական եկամուտներ	6	169,865	389,815
Գործառնական եկամուտներ		2,995,829	2,721,204
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	7	**66,141**	**(436,171)**
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(968,734)	(992,392)
Այլ գործառնական ծախսեր	9	(152,920)	(81,849)
Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը		1,940,316	1,210,792
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	10	**(403,396)**	**(203,792)**
Ժամանակաշրջանի զուտ շահույթ		1,536,920	1,007,000
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		**(539,614)**	**712,400**
Ֆինանսական արդյունքներ փոխանցված զուտ օգուտ (վնաս)		**(692,793)**	**-**
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած զուտ օգուտ (վնաս)		18,275	890,500
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերվող բաղկացուցիչ մասի շահութահարկ		134,904	(178,100)
Համապարփակ ֆինանսական արդյունք		***997,306***	***1,719,400***
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	11	2.3	1.5
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ	11	2.3	1.5

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14/04/18

Վարչության նախագահի ժ/պ _____ Ռ.Մելիքյան

Գլխավոր հաշվապահ _____ Ա.Գրիգորյան

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ֆինանսական վիճակի մասին

«31» Մարտի 2018 թ.

«ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 13

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	31/03/18	31/12/2017թ. (չստուգված)
Ակտիվներ			
Կանխիկ դրամական միջոցներ		2,449,510	2,967,268
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	12	16,326,634	14,436,543
Պահանջներ բանկերի նկատմամբ	13	2,939,015	7,418,421
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	14	6,645	9,952
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	15	4,121,848	6,493,486
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ	16	74,978,470	64,519,633
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	17	5,206,335	29,406,955
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	18	21,493,090	-
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	19	5,071,603	5,034,278
Բռնագանձված ակտիվներ	20	843,325	749,383
Այլ ակտիվներ	21	771,150	895,424
Ընդամենը՝ ակտիվներ		***134,207,625***	***131,931,343***
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	22	6,722,770	2,067,990
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23	65,236,842	67,320,197
Այլ փոխառություններ	24	2,055,854	2,195,463
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ	14	3,909	229,753
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	25	10,772,193	10,815,059
Հետաձգված հարկային պարտավորություններ	26	1,585,283	2,071,577
Այլ պարտավորություններ	27	419,782	425,197
Ընդամենը՝ պարտավորություններ		***86,796,633***	***85,125,236***
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	28	33,971,850	33,971,850
Էմիսիոն եկամուտ		5,014,099	5,014,099
Պահուստներ՝		1,103,916	3,606,608
Գլխավոր պահուստ		107,760	107,760
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ		156,499	156,499
Իրական արժեքով չափվող ֆին. ակտիվների վերագնահատման պահուստ		839,657	3,342,349
Չբաշխված շահույթ (վնաս)		7,321,127	4,213,550
Ընդամենը՝ կապիտալ		***47,410,992***	***46,806,107***
Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		***134,207,625***	***131,931,343***

Հաշվետվության վավերացման ամսաթիվը *14/04/18*

Վարչության նախագահի ժ/պ _____ Ռ.Մելիքյան

Գլխավոր հաշվապահ _____ Ս.Գրիգորյան

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին

« 31» Դեկտեմբերի 2017 թ

«ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 13

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Կանոնադրական կապիտալ	էմիսիոն եամուտ	Գլխավոր պահուստ	Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	Իրական արժեքով՝ այլ համ ֆին արդ միջ չափվող ֆին ակտիվների վերագ պահուստ	Չբաշխված շահույթ (վնաս)	***Ընդամենը կապիտալ***
Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական)							
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ *(ստուգված)*	33,971,850	5,014,099	107,760	156,499	1,925,441	(53,822)	***41,121,827***
Տարվա շահույթ (վնաս)	-	-	-	-	-	1,007,000	***1,007,000***
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**-**	**-**	**-**	***712,400***	**-**	***712,400***
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած զուտ օգուտ (վնաս)	-	-	-	-	890,500	-	***890,500***
Այլ համապարփակ ֆին. արդ վերաբերվող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	-	(178,100)	-	***(178,100)***
Մնացորդը 2017թ. մարտի 31-ի դրությամբ *(չստուգված)*	***33,971,850***	***5,014,099***	***107,760***	***156,499***	***2,637,841***	***953,178***	***42,841,227***

Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական)							
Մնացորդը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ *(չստուգված)*	33,971,850	5,014,099	107,760	156,499	3,342,349	4,213,550	***46,806,107***
Տարվա շահույթ (վնաս)	-	-	-	-	-	1,536,920	***1,536,920***
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	***(539,614)***	-	***(539,614)***
Ֆինանսական արդյունքներ փոխանցված զուտ օգուտ (վնաս)	-	-	-	-	(692,793)	-	***(692,793)***
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած զուտ օգուտ (վնաս)	-	-	-	-	18,275	-	***18,275***
Այլ համապարփակ ֆին արդ վերաբերվող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	-	134,904	-	***134,904***
ՀՀՄՍ-ի փոփոխության հետևանքով այլ շարժեր	-	-	-	-	***(1,963,078)***	***1,570,657***	***(392,421)***
Տեղափոխություն վերագնահատման աճից չբաշխված շահույթ	-	-	-	-	(2,453,847)	2,453,847	-
Սպասվող պարտքային կորստի անդրադարձը չբաշխվող շահույթին	-	-	-	-	-	(1,103,987)	***(1,103,987)***
շահութահարկ	-	-	-	-	490,769	220,797	***711,566***
Մնացորդը 2018թ. մարտի 31-ի դրությամբ *(չստուգված)*	***33,971,850***	***5,014,099***	***107,760***	***156,499***	***839,657***	***7,321,127***	***47,410,992***

Հաշվետվության վավերացման ամսաթիվը *14/04/18*

Վարչության նախագահի ժ/պ _____ Ռ.Մելիքյան

Գլխավոր հաշվապահ _____ Ա.Ղազարյան

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դրամական միջոցների հոսքերի մասին

« 31» Դեկտեմբերի 2017 թ

«ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 13

(բանկի անվանումը և գտնվելու վայրը) *(հազար դրամ)*

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
	01/01/17-ից 31/03/17թ.	01/01/18-ից 31/03/18թ.
1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	**443,311**	**1,500,662**
Ստացված տոկոսներ	5,236,740	3,229,868
Վճարված տոկոսներ	(4,209,164)	(1,744,748)
Ստացված կոմիսիոն գումարներ	183,369	450,541
Վճարված կոմիսիոն գումարներ	(15,549)	(106,633)
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ/(վնաս)	47,457	174,333
Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ	142,170	352,210
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(595,986)	(580,882)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր	(345,726)	(274,027)
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից	**2,785,449**	**(7,129,951)**
Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)	7,231,006	(5,601,062)
այդ թվում՝ վարկերի և փոխատվությունների նվազում/ (ավելացում)	5,152,760	(5,466,631)
այլ գործառնական ակտիվների նվազում/(ավելացում)	2,078,246	(134,431)
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)	(4,445,557)	(1,528,889)
այդ թվում՝ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում/(նվազում)	(4,792,096)	(1,763,677)
այլ գործառնական պարտավորությունների ավելացում/(նվազում)	346,539	234,788
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը	3,228,760	(5,629,289)
Վճարված շահութահարկ	-	(30,000)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից	**3,228,760**	**(5,659,289)**
2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	**x**	**x**
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներում ներդրումների նվազում (ավելացում)	(11,485,528)	3,094,339
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում)	(198,029)	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(33,543)	(148,673)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում	16,883	3,250
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	(11,700,217)	2,948,916
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	x	x
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)	(334,680)	(135,306)
Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)	1,179,830	4,766,480
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)	(5,326)	(19,846)
Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)	1,506,269	-
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	**2,346,093**	**4,611,328**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(28,210)	(43,810)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	(6,153,574)	1,857,145
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	30,061,489	17,229,253
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	**23,907,915**	**19,086,398**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14/04/*18*

Գլխավոր տնօրենի ժ/գ _____ Ռ.Մելիքյան

Գլխավոր հաշվապահ _____

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ

«ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 13

(Բանկի անվանումը և գտնվելու վայրը)

Ամսաթիվը 01/01/18 **թ.-ից** 31/03/18 **թ.**

(Հազար,դրամ)

Նորմատիվներ	Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համար	ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
1	*2*	*3*	*4*
Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը	33,971,850	50,000	Խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	41,259,728	30,000,000	Խախտում առկա չէ
Ն1 Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	46.64%	12.0%	Խախտում առկա չէ
Ն21 Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	40.56%	15.0%	Խախտում առկա չէ
Ն22 Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	321.24%	60.0%	Խախտում առկա չէ
Ն211 Բանկի առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	29.79%	4.0%	Խախտում առկա չէ
Ն221 Բանկի առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	179.34%	10.0%	Խախտում առկա չէ
Ն31 Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	17.32%	20.0%	Խախտում առկա չէ
Ն32 Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը	85.53%	500.0%	Խախտում առկա չէ
Ն41 Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը	0.10%	5.0%	Խախտում առկա չէ
Ն42 Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը	0.99%	20.0%	Խախտում առկա չէ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափը՝			
ՀՀ դրամով	X	2.0%	Խախտում առկա չէ
արտարժույթով	X	18.0%	Խախտում առկա չէ
Արտարժութային դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը	0.09%	10.0%	Խախտում առկա չէ
Ըստ առանձին արտարժույթների յուրաքանչյուր արտարժույթի դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը՝			
ԱՄՆ դոլարով	0.0%	7.0%	Խախտում առկա չէ
Եվրոյով	0.0%	7.0%	Խախտում առկա չէ
Ռուսական ռուբլիով	0.0%	7.0%	Խախտում առկա չէ
Այլ	X	7.0%	Խախտում առկա չէ

Վարչության նախագահի ժ/պ _____ Ռ.Մելիքյան

Գլխավոր հաշվապահ _____ Ա.Գրիգորյան

Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն հիմնադրվել է 1990թ.-ին Հայաստանի Հանրապետությունում: «ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից վերակազմավորվել է փակ բաժնետիրական ընկերության 2007թ. ապրիլին:
Բանկի հիմնական գործունեությունն է հանդիսանում ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկային գործառնությունների իրականացումը, երաշխավորությունների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների, ինչպես նաև արժեթղթերով ու արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ավանդների հատուցումը երաշխավորող պետական համակարգի անդամ:

Բանկի գլխավոր գրասենյակը գտնվում է Երևանում, իսկ թվով 14 մասնաճյուղերը գտնվում են Երևանում և տարբեր շրջաններում:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Վարդանանց փ. 13:

Բանկի մասնաճյուղերը՝
«Վարդանանց» մասնաճյուղ,ք. Երեւան, Վարդանանց փ. 13/3, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33
Գյումրիի մասնաճյուղ, ք.Գյումրի, Անկախության հր-կ 6, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33,
Աբովյանի մասնաճյուղ,ք.Աբովյան,Օգոստոսի 23 փ, 4շ, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33
«Պայազատ» մասնաճյուղ,ք.Գավառ, Անդրանիկի 30ա, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33,
«Արաբկիր» մասնաճյուղ,ք. Երեւան, Կոմիտաս 56/162, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33
«Նոր Նորք» մասնաճյուղ,ք. Երեւան, Գայի պողոտա 17/1 շենք, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33,
Էջմիածնի մասնաճյուղ,ք.Էջմիածին, Մաշտոցի 48, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33
Վանաձորի մասնաճյուղ,ք. Վանաձոր, Խորենացի 4, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33
Դավթաշենի մասնաճյուղ,ք. Երեւան, Դավթաշեն 4-րդ թաղ., 11/91, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33
Սևանի մասնաճյուղ,ք. Սևան, Սայաթ-Նովա 12/1, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33
«Բաղրամյան » մասնաճյուղ, ք. Երեւան, Բաղրամյան 75, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33
«Մալաթիա» մասնաճյուղ, ք. Երեւան, Ռաֆֆու 39/61,Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33,
«Տիգրան Մեծ» մասնաճյուղ, ք. Երեւան, Տիգրան Մեծի 4, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33
«Էրեբունի» մասնաճյուղ, ք. Երեւան, Էրեբունի 7/60, Հեռ.՝ (37410) 59-33-33, (37460) 27-33-33

Բանկի աշխատողների միջին թվաքանակը 2018 թ-ի առաջին եռամսյակում կազմել է 397 մարդ:

Կորպորատիվ կառավարում

Կորպորատիվ կառավարման սկզբունքներից ելնելով և ղեկավարվելով «Բանկերի և Բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի դրույթներով, Բանկի արդյունավետ ղեկավարման համար գործում է Բանկի Վարչությունը: Բանկի Վարչությունն իրականացնում է Բանկի գործունեության ընթացիկ

ղեկավարումը, կազմակերպում է Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի, Բանկի Խորհրդի և իր կողմից ընդունված որոշումների կատարումը, ապահովում է բանկի խորհրդի կողմից հաստատված ռազմավարական ծրագրի և ներքին ակտերի կատարումը:

Բանկի Խորհուրդը, Վարչության աշխատանքների գնահատման համար, հիմք է ընդունում Վարչության նախագահի, Գլխավոր հաշվապահի, Ներքին վերահսկողության վարչության կողմից Խորհրդին ներկայացվող պարբերական հաշվետվությունները և տեղեկատվությունը, ՀՀ կենտրոնական բանկի ստուգման ակտերը, ինչպես նաև արտաքին աուդիտի եզրակացությունը: Վարչության աշխատանքները գնահատվում են ելնելով Վարչության կողմից իրականացվող՝

- ✓ Բանկի ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքից,
- ✓ Խորհրդի կողմից ընդունված որոշումների կատարումից,
- ✓ Ռիսկերի զսպմանն ուղղված գործառույթներից,
- ✓ Բանկի ընթացիկ գործունեության արդյունավետ կառավարումից,
- ✓ Տոկոսադրույքների քաղաքականությունից,
- ✓ Եկամուտների և ծախսերի արդյունավետ քաղաքականությունից,
- ✓ Կադրային քաղաքականությունից

Բանկի խորհրդի կազմը

Վարդան Դիլանյան՝	Խորհրդի նախագահ
Կարեն Մարգարյան՝	Խորհրդի անդամ
Մաքսիմ Մորոզով՝	Խորհրդի անդամ
Հագոբ Գասարճեան՝	Խորհրդի անդամ
Մազեն Շեհայեբ Ակրամ՝	Խորհրդի անդամ

Բանկի վարչության կազմը

Ռուբեն Մելիքյան՝	Վարչության նախագահի ժ/պ, Ֆինանսական տնօրեն, Վարչության անդամ
Սերգեյ Վիրաբյան՝	Կորպորատիվ բիզնեի գծով տնօրեն, Վարչության անդամ
Կարեն Նալբանդյան՝	Բիզնեսի զարգացման գծով տնօրեն, Վարչության անդամ
Վարդան Գևորգյան՝	Մանրածախ բիզնեսի գծով տնօրեն, Վարչության անդամ
Արման Ասատրյան՝	Գործառնական տնօրեն՝ Վարչության անդամ
Ռաֆիկ Սուվարյան՝	Ռիսկերի կառավարման գծով տնօրեն, Վարչության անդամ
Անուշիկ Խաչատրյան՝	Գլխավոր հաշվապահ-Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների վարչության պետ, Վարչության անդամ
Սերգեյ Առաքելյան՝	Թվային Բանկինգի տնօրեն, Վարչության անդամ

Բանկի բաժնետերեր

Բաժնետեր	Մասնակության չափը (հազար դրամ)	%
ՖԻՍԹՈՔՈ էլ Թի Դի	20,275,550	59.68%
CreditBank S.A.L.	13,696,300	40.32%
Ընդամենը	**33,971,850**	**100%**

Գործարար միջավայր

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Բանկի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

1. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

Համապատասխանությունը

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների, որոնք ներկայացված են իրական արժեքով ու վերագնահատված արժեքով հաշվառվող շենքերի:

Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի ֆունկցիոնալ արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը («դրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են դրամի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների զծով արտարժույթով իրականացված գործառնություններից առաջացած օգուտը կամ

վնասն իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Վերափոխարկման արդյունքում առաջացող արտարժութային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ բաժնային գործիքների վերափոխարկման արդյունքում առաջացող տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված արտարժութային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, ՀՀ ԿԲ-ում և այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ) և բարձր իրացվելիությամբ ֆինանսական ակտիվները, որոնց սկզբնական մարման ժամկետը կազմում է մինչև երեք ամիս, որոնք ենթարկվում են իրական արժեքի փոփոխման ոչ էական ռիսկի ու օգտագործվում են Բանկի կողմից կարճաժամկետ պարտավորվածությունների կառավարման համար: ՀՀ ԿԲ-ում պահվող նվազագույն պահուստային ավանդը չի համարվում դրամական միջոցների համարժեք, քանի որ դրանից միջոցների ելքագրումը սահմանափակված է: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Ֆինանսական գործիքներ
Դասակարգում

Համաձայն ՖՀՄՍ 9-ի ֆինանսական ակտիվների դասակարգումները հետևյալն են.

- *Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, որոնք բանկը նախատեսում է պահել պայմանագրային հոսքերը հավաքագրելու նպատակով:*
- *Իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, որոնք բաղկացած են հետևյալ ենթակատեգորիաներից,*
    - *Ֆինանսական ակտիվներ, որոնց գծով բավարարված են ամորտիզացված արժեքով հաշվառման պահանջները, սակայն բանկը սկզբնական ճանաչման պահին դասակարգում է դրանք իրական արժեքով հաշվառվող՝ նվազեցնելով հաշվառման անհամապատասխանությունը:*
    - *Մնացած ֆինանսական ակտիվները, որոնք չեն բավարարում ամորտիզացված արժեքով հաշվառվող դասակարգման պահանջները:*

Ճանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Բանկը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները հաշվառվում են առք ու վաճառքի ամսաթվի դրությամբ:

Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ՝

- վարկերի ու դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- բաժնային գործիքներում ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնանշվող շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավատորեն չափել և որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պահանջները:

Ամորտիզացված արժեք

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած սկզբնապես ճանաչված գումարի և մարման պահին գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան, որը հաշվարկվել է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստը: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Իրական արժեքի չափման սկզբունքներ

Իրական արժեքն այն գինն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ հիմնական շուկայում կամ, վերջինիսի բացակայության դեպքում, ամենաբարենպաստ շուկայում, որին մուտքի հնարավորություն ունի Բանկը նշված ամսաթվի դրությամբ: Պարտավորության իրական արժեքն արտացոլում է վերջինիս չկատարման ռիսկը:

Հնարավորության դեպքում, Բանկը չափում է գործիքի իրական արժեքը՝ կիրառելով այդ գործիքի համար ակտիվ շուկայում գնանշվող գները: Շուկան համարվում է ակտիվ, եթե ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով՝ շարունակական հիմունքով գնային տեղեկատվություն տրամադրելու համար: Ակտիվ շուկայում գնանշվող գնի բացակայության դեպքում, Բանկը կիրառում է գնահատման մեթոդներ՝ դիտարկելի տվյալների օգտագործումն առավելագույնի և ոչ դիտարկելի տվյալների օգտագործումը նվազագույնի հասցնելու նպատակով: Ընտրված գնահատման մեթոդը ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեին նման հանգամանքներում:

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն ապացույցը սովորաբար գործարքի գինն է, այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը: Եթե Բանկը որոշում է, որ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և իրական արժեքը չի հիմնավորվում է ակտիվ շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության համար գնանշվող գնով կամ հիմնված չէ գնահատման այնպիսի մեթոդի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի տվյալները, ապա ֆինանսական գործիքի սկզբնական չափումն իրականացվում է իրական արժեքով՝ ճշգրտված սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության հետաձգումով: Հետագայում, տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում համապատասխան հիմունքով՝ գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, սակայն ոչ ուշ այն պահից, երբ գնահատումն ամբողջովին հիմնավորվում է շուկայի դիտարկելի տվյալներով կամ գործարքն ավարտվում է:

Եթե իրական արժեքով չափվող ակտիվը կամ պարտավորությունն ունի պահանջարկի և առաջարկի գին, ապա Բանկը չափում է ակտիվները և երկար դիրքերը պահանջարկի գնով, իսկ պարտավորությունները և կարճ դիրքերը՝ առաջարկի գնով:

Բանկը ճանաչում է իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղի ունեցող փոխանցումներն այն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, որի ընթացքում կատարվել են այդ փոփոխությունները:

Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- շահույթում կամ վնասում ճանաչվում է այն ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը, որը դասակարգված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է սեփական կապիտալում՝ որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք (բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մատչելի պարտքային ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթի և վնասի), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև՝ ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

Ապաճանաչում

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Բանկը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմանները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Բանկի կողմից, ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Բանկը կատարում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Եթե ակտիվի սեփականության հետ կապված բոլոր կամ ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները պահպանվում են, ապա փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Գործարքներում, որոնցում Բանկը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, այն ապաճանաչում է ակտիվը, եթե կորցնում է դրա նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցումների այն գործարքներում, որոնցում Բանկը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:
Եթե Բանկը ձեռք է բերում իր սեփական պարտքը, ապա այն դուրս է բերվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից, և պարտավորության հաշվեկշռային արժեքի ու վճարված հատուցման տարբերությունը ներառվում է պարտքի ժամկետից շուտ մարման արդյունքում առաջացած շահույթում կամ վնասում:
Բանկը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները:

Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով (“ռեպո”) վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը ներառվում է հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարների կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վերավաճառքի նպատակով հակադարձ հետգնման պայմանագրերով («հակադարձ ռեպո») ստացվելիք գումարները գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում հակադարձ հետգնման պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հետադարձ վաճառք նախատեսող պայմանագրի շրջանակներում գնված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, ապա արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակներով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառում են սվոպերը, ֆորվարդները, ֆյուչերսները, տոկոսադրույքների, արտարժույթների փոխարժեքների, թանկարժեք մետաղների, բորսաներում շրջանառվող օպցիոնները, ինչպես նաև այս գործիքների ցանկացած համակցությունը:

Ածանցյալ գործիքների սկզբնական ճանաչումն իրականացվում է ածանցյալ գործիքի պայմանագրի կնքման օրը գործող իրական արժեքով: Հետագայում ածանցյալ գործիքները վերաչափվում են իրական արժեքով: Բոլոր ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ՝ դրական իրական արժեքի դեպքում և որպես պարտավորություն՝ բացասական իրական արժեքի դեպքում:

Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Թեև Բանկն ածանցյալ գործիքների առքն ու վաճառքն իրականացնում է ռիսկի հեջավորման նպատակով, այս գործիքները չեն համապատասխանում հեջի հաշվառման պահանջներին:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվելով զուտ գումարով, միայն այն դեպքում, երբ Բանկն ունի ճանաչված գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Հիմնական միջոցներ

Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, բացառությամբ շենքերի, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքով, ինչպես ներկայացված է ստորև:
Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Վերագնահատում

Շենքերը ենթակա են վերագնահատման կանոնավոր հիմունքով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատման ենթակշենքերի իրական արժեքների շարժից: Երբ շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Երբ շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի սեփական

կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Հողի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

շենքեր	50 տարի
վարձակալված գույքի բարելավում	20 տարի
համակարգիչներ և կապի սարքավորումներ	4-10 տարի
փոխադրամիջոցներ	10 տարի
տնտեսական գույք	10 տարի

Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման ծախսեր:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կան վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 10 տարի:

Արժեզրկում կամ սպասվող պարտքային կորուստ

Համաձայն ՖՀՄՍ 9-ի պահանջների՝ Բանկը արժեզրկումը գնահատում և ճանաչում է մինչև արժեզրկման անկողմնակալ վկայություն տեղի ունենալը: Սա կոչվում է նաև սպասվող պարտքային կորուստ:

Սպասվող պարտքային կորուստը հաշվարկելու համար Բանկը գնահատում է արժեզրկման/դեֆոլտի դեպքի տեղի ունենալու հնարավոր պարտքային կորուստը՝ որպես ուշացումների և անհավաքագրումների ներկա արժեք (ներառյալ գրավի և այլ ապահովվածության առկայություն), և բազմապատկում այդ գումարը տվյալ դեպքը տեղի ունենալու հավանականությամբ:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են վարկերը և այլ դեբիտորական պարտքերը («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Բանկը վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկումը կանոնավոր հիմունքով գնահատելու նպատակով:

Ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեքով հաշվառման էությունը կայանում է նրանում, որ այդ գործիքների սկզբնական արժեքի և ամբողջական մարման գումարի (որը շատ հաճախ մաս մաս է մարվում գործիքի կյանքի ընթացքում) տարբերությունը հանդիսանում է իր տնտեսական բովանդակությամբ տոկոս՝ այսինքն հատուցում ժամանակի և պարտքային ռիսկի դիմաց: Այս տարբերությունը բաժանվում է գործիքի գոյության ժամանակաշրջանների միջև այնպես, որ այն հանդիսանա յուրաքանչյուր ժամանակաշրջանում միայն չմարված պարտքի դիմաց հատուցում՝ հաշվարկված հաստատուն տոկոսադրույքով:

Այն դեպքերում, երբ վարկի հավաքագրումը հնարավոր չէ, վարկը դուրս է գրվում ի հաշիվ արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստի: Բանկը վարկի մնացորդը (և արժեզրկման գծով ձևավորված ցանկացած պահուստը) դուրս է գրում, երբ ղեկավարությունը որոշում է, որ վարկը ենթակա չէ հավաքագրման և ձեռնարկվել են վարկի վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

Իրական արժեքով՝այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակված վնասը փոխանցելով շահույթի կամ վնասի կազմ՝ որպես վերադասակարգման ճշգրտում: Կուտակված վնասը, որը այլ համապարփակ ֆինանսական արդյունքից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ, հանդիսանում է ձեռքբերման արժեքի՝ հանած մայր գումարի մարումները ու մաշվածությունը, և ընթացիկ իրական արժեքի՝ հանած նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված արժեզրկումից կորուստները, միջև տարբերությունը: Ժամանակի արժեքին վերագրելի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններն արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված պարտքային արժեթղթի իրական արժեքն աճում է, և այդ աճը հնարավոր է կապել շահույթում կամ վնասում արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձված գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, արժեզրկված բաժնային արժեթղթի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Ոչ ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Գուդվիլի փոխհատուցվող գումարը գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից (հանած վաճառքի ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին

պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ՝ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Գուդվիլի գծով արժեզրկումից կորուստը չի հակադարձվում:

Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Բանկը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

Վարկային պարտավորվածություններ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը հանձն է առնում վարկային պարտավորվածություններ, որոնք ներառում են չօգտագործված վարկային պարտավորվածությունները, ակրեդիտիվները և երաշխիքները, ինչպես նաև տրամադրում է վարկային ապահովագրման այլ տեսակներ:

Ֆինանսական երաշխավորություններն իրենցից ներկայացնում են պայմանագրեր, որոնք պարտավորեցնում են Բանկին կատարել որոշակի վճարումներ, որոնք կփոխհատուցեն երաշխավորության սեփականատիրոջ այն վնասները, որոնք նա կկրեր, եթե առանձին պարտապանն ի վիճակի չլիներ կատարել վճարումները պարտքային գործիքի պայմաններով նախատեսված ժամկետներում:
Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունը սկզբնապես ճանաչվում է իրական արժեքով, հաշվի չառնելով գործարքի հետ կապված ծախսումները, և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնով՝ սկզբնապես ճանաչված գումարը՝ հանած կուտակված ամորտիզացիան կամ երաշխիքի գծով կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխավորությունների գծով կորուստների պահուստը և վարկավորման այլ պարտավորվածությունները ճանաչվում են, երբ գոյություն ունի վնաս կրելու հավանականություն և այդ վնասը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունները և վարկային այլ պարտավորվածությունների գծով պահուստները ներառվում են այլ պարտավորությունների կազմում:

Վարկային պարտավորվածությունները չեն ճանաչվում, բացառությամբ հետևյալ պարտավորվածությունների.

– վարկային պարտավորվածություններ, որոնք Բանկը նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ,

- եթե Բանկն ունի իր վարկային պարտավորվածություններից առաջացող ակտիվների՝ դրանց առաջացումից կարճ ժամանակ անց վաճառելու նախկին պրակտիկա, ապա նույն դասում գտնվող բոլոր վարկային պարտավորվածությունները դիտվում են որպես ածանցյալ գործիքներ,
- վարկային պարտավորվածություններ, որոնք կարող են մարվել զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիք մատակարարելով կամ թողարկելով,
- շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու պարտավորվածություններ:

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկային հետևանքների:

Էմիսիոն եկամուտ

Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավել վճարվող գումարը ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հոդվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող եկամտի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ճանաչվում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման համար ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքում, որն ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Բանկը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկի գծով համապատասխան օգուտը կարող է իրացվել:

Եկամտի և ծախսի ճանաչում

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վարկերի տրամադրման, սպասարկման և այլ վճարները, որոնք գործարքի հետ կապված ծախսերի հետ միասին դիտարկվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում են և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆիանսական գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ վճարները, կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում ենք շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ վարձակալության գործողության ժամկետի ընթացքում:

Համադրելի տեղեկատվություն

Համադրելի տեղեկատվությունը վերադասակարգվել է հաշվետու տարվա ներկայացման հետ համապատասխանություն ապահովելու նպատակով:

3. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

հազար ՀՀ դրամ

Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	01/01/2018թ. 31/03/2018թ.	01/01/2017թ. 31/03/2017թ.
Տոկոսային եկամուտներ բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից	78,526	23,149
Տոկոսային եկամուտ հաճախորդներին տրված վարկերից և փոխատվություններից	1,969,602	5,416,412
Տոկոսային եկամուտ արժեղթերից	671,003	591,843
Տոկոսային եկամուտ «Ռեպո» պայմանագրերից	61,225	69,353
Այլ տոկոսային եկամուտ	7,708	-
Ընդամենը	**2,788,064**	**6,100,757**



հազար ՀՀ դրամ

Տոկոսային և նմանատիպ ծախսեր	01/01/2018թ. 31/03/2018թ.	01/01/2017թ. 31/03/2017թ.
Տոկոսային ծախսեր բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց	133,380	1,002,545
Տոկոսային ծախսեր հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց	835,614	2,921,917
Տոկոսային ծախսեր բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց	175,432	44,795
Տոկոսային ծախսեր «Ռեպո» պայմանագրերի դիմաց	26,213	14,950
Այլ տոկոսային ծախսեր	5,784	60,468
Ընդամենը	**1,176,423**	**4,044,675**



Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	**1,611,641**	**2,056,082**

4. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

հազար ՀՀ դրամ

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	**01/01/2018թ. 31/03/2018թ.**	**01/01/2017թ. 31/03/2017թ.**
Դրամարկղային գործառնություններից	39,808	29,121
Հաշվարկային ծառայություններից և սպասարկումից	276,662	177,199
Վճարային քարտերի սպասարկումից	47,167	38,962
Այլ կոմիսիոն վճարներ	86,904	-
Ընդամենը	**450,541**	**245,282**



հազար ՀՀ դրամ

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	**01/01/2018թ. 31/03/2018թ.**	**01/01/2017թ. 31/03/2017թ.**
Թղթակցային և այլ հաշիվների դիմաց կոմիսիոն վճարներ	29,620	6,017
Վճարային քարտերով գործառնությունների գծով վճարներ	8,357	7,176
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	4,542	2,347
Այլ կոմիսիոն վճարներ	64,114	9
Ընդամենը	**106,633**	**15,549**



Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	**343,908**	**229,733**

5. Զուտ եկամուտ առևտրային գործունեությունից

հազար ՀՀ դրամ

Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներից	01/01/2018թ. 31/03/2018թ.	01/01/2017թ. 31/03/2017թ.
Զուտ շահույթ արտարժութային պայմանագրերից	(291,087)	55,811
Զուտ շահույթ ֆինանսական ակտիվների առք ու վաճառքից	4,195	6,675
Ընդամենը	**(286,892)**	**62,486**



հազար ՀՀ դրամ

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից	01/01/2018թ. 31/03/2018թ.	01/01/2017թ. 31/03/2017թ.
Զուտ շահույթ Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից	722,963	136
Ընդամենը	**722,963**	**136**

Արտարժութային գործառնություններից	01/01/2018թ. 31/03/2018թ.	01/01/2017թ. 31/03/2017թ.
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	170,138	40,783
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	263,341	(57,632)
Ընդամենը	**433,479**	**(16,849)**



հազար ՀՀ դրամ

Այլ Գործառնություններից	01/01/2018թ. 31/03/2018թ.	01/01/2017թ. 31/03/2017թ.
Առարկայազուրկ մետաղական հաշիվների առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	503	(194)
Առարկայազուրկ մետաղական հաշիվների վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	362	(5)
Ընդամենը	**865**	**(199)**



Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	**870,415**	**45,574**

6. Այլ գործառնական եկամուտ

հազար ՀՀ դրամ

Այլ գործառնական եկամուտներ	01/01/2018թ. 31/03/2018թ.	01/01/2017թ. 31/03/2017թ.
Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից	158,967	331,764
Օգուտներ հիմնական միջոցների և այլ գույքի օտարումից	2,202	1,222
Այլ եկամուտներ	8,696	56,829
Ընդամենը	**169,865**	**389,815**



7. Արժեզրկման ծախս

հազար ՀՀ դրամ

	01/01/2018թ. 31/03/2018թ.	01/01/2017թ. 31/03/2017թ.
Արժեզրկումից կորուստներ		
Հաճախորդներին տրված վարկեր, փոխատվություններ	(332,774)	412,994
Այլ ակտիվներ	263,593	23,177
Երաշխավորություններ և պարտքային ռիսկ պարունակող այլ պայմանական պարտավորություններ	3,040	-
Ընդամենը	**(66,141)**	**436,171**



8. Ընդհանուր վարչական ծախսեր

հազար ՀՀ դրամ

Ընդհանուր վարչական ծախսեր	**01/01/2018թ. 31/03/2018թ.**	**01/01/2017թ. 31/03/2017թ.**
Անձնակազմի գծով ծախսեր	592,073	601,128
Հ. մ. և ոչ նյութ ակտի ամորտ ծախսեր	108,096	126,548
Գովազդային և ներկայացուց ծախսեր	13,825	16,911
Գործառ վարձակալ գծով ծախսեր	45,779	40,939
Կապի և հաղորդն միջոցների գծով ծախսեր	14,200	13,819
Ծախսեր հարկերի և այլ պարտ վճ գծով	57,644	49,412
Վերանորոգման և պահպ ծախսեր	58,699	50,273
Գործուղման ծախսեր	6,944	5,037
Անվտանգության գծով ծախսեր	23,039	36,423
Գրասենյակային ծախսեր	6,609	7,314
Աուդիտ և խորհ ծառ գծով ծախսեր	12,908	9,841
Այլ վարչական ծախսեր	28,918	34,747
Ընդամենը	**968,734**	**992,392**



Բանկի աշխատակիցների միջին քանակը հաշվետու եռամսյակում կազմել է 397 (2017թ. 1-ին եռամսյակում՝ 358):

9. Այլ գործառնական ծախսեր

հազար ՀՀ դրամ

Այլ գործառնական ծախսեր	**01/01/2018թ. 31/03/2018թ.**	**01/01/2017թ. 31/03/2017թ.**
Վճարված տույժեր և տուգանքներ	502	2,373
Ինկասացիայի համար կատարված վճարումներ	17,269	5,772
Կորուստներ հիմնական միջոցների և այլ գույքի օտարումից	359	293
Այլ ծախսեր	134,790	73,411
այդ թվում՝ վճարային գործառնությունների գծով	*50,994*	*37,555*
Ընդամենը	**152,920**	**81,849**



10. Շահութահարկի գծով ծախսեր

հազար ՀՀ դրամ

Շահութահարկի գծով ծախս	**01/01/2018թ. 31/03/2018թ.**	**01/01/2017թ. 31/03/2017թ.**
Ընթացիկ հարկի գծով ծախս	2,503	99
Հետաձգված հարկի գծով ծախս/(հատուցում)	400,893	203,693
Ընդամենը	**403,396**	**203,792**



Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2017թ.՝ 20%)։ ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև։ Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով։

11. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ

հազար ՀՀ դրամ

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	**01/01/2018թ. 31/03/2018թ.**	**01/01/2017թ. 31/03/2017թ.**
Ժամանակաշրջանի զուտ շահույթ	1,536,920	1,007,000
Բաժնետոմսերի քանակը	679,437	679,437
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ	**2.3**	**1.5**

12. ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ

Հազար ՀՀ դրամ

ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	31/03/18թ.	31/12/17թ.
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	16,425,410	11,915,803
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	123,000	520,000
Ավանդներ ՀՀ ԿԲ-ում	-	2,000,740
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	**16,548,410**	**14,436,543**
Սպասվող պարտքային կորուստ	(221,776)	-
Ընդամենը ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված միջոցներ	**16,326,634**	**14,436,543**



2018թ. մարտի 31-ի դրությամբ թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք հաշվարկվում են Բանկի կողմից ներգրված դրամային որոշ միջոցների 2%-ի և արտարժույթով որոշ միջոցների 18%-ի չափով:

13. Պահանջներ բանկերի նկատմամբ

Հազար ՀՀ դրամ

Թղթակցային / նոստրո / հաշիվներ	31/03/18թ.	31/12/17թ.
Ընդամենը	**211,478**	**345,442**
Միջբանկային վարկեր և ավանդներ		
Ընդամենը	**2,400,432**	**6,485,377**
Այլ պահանջներ բանկերի նկատմամբ		

Ընդամենը	**331,497**	**587,602**
Սպասվող պարտքային կորուստ	(4,392)	-
Ընդամենը պահանջներ բանկերի նկատմամբ	**2,939,015**	**7,418,421**



14. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

	31/03/18թ. հազ. դրամ	31/12/17թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Ածանցյալ ֆինանսական գործիքներ		
Արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրեր	6,645	9,952
	6,645	**9,952**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ածանցյալ ֆինանսական գործիքներ		
Արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրեր	3,909	229,753
	3,909	**229,753**

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ներառում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական գործիքները:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներն ժամկետանց կամ արժեզրկված չեն:

15. Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ

	31/03/18թ.	31/12/17թ.
ՀՀ բանկեր	-	2,900,619
ՀՀ ֆինանսական կազմակերպություններ	4,107,352	3,576,045
ՀՀ այլ անձինք	16,816	16,822
Հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	**4,124,168**	**6,493,486**
Սպասվող պարտքային կորուստ	(2,320)	-
Հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	**4,121,848**	**6,493,486**



16. Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր

(հազ. դրամ)

Հաճախորդներին տրված վարկեր	31/03/2018թ.	31/12/2017թ.
Առևտրային վարկեր		
Վարկեր իրավաբանական անձանց և ա/ձ-ին	49,088,798	38,599,931
Ընդամենը	**49,088,798**	**38,599,931**
Անհատներին տրված վարկեր		
Սպառողական վարկեր	13,623,450	14,153,115
Էքսպրես վարկեր	3,646,510	4,102,302
Ոսկու գրավով վարկեր	6,306,116	5,838,461
Հիպոթեքային վարկեր	3,300,980	2,829,118

Գյուղատնտեսական վարկեր	231,206	226,816
Ավտովարկեր	30,707	39,993
Ընդամենը	**27,138,969**	**27,189,805**
Ընդամենը վարկեր	**76,227,767**	**65,789,736**
Արժեզրկման գծով պահուստ	(1,249,297)	(1,270,103)
Ընդամենը զուտ վարկեր	**74,978,470**	**64,519,633**
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	**74,978,470**	**64,519,633**

Հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշները

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2018 թվականի մարտի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկում հազ. դրամ	Զուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկում %
Վարկեր ա/ձ-ին և ընկերություններին				
Վարկեր, որոնց գծով արժեզրկման առանձին հայտանիշ չի հայտնաբերվել	32,714,192	223,229	32,490,963	0.7%
Ժամկետանց կամ արժեզրկված վարկեր				
· Ոչ ժամկետանց	13,609,958	187,366	13,422,592	1.4%
· Մինչև 30 օր ժամկետանց	299,593	85,002	214,591	28.4%
· 31-90 օր ժամկետանց	244,778	85,213	159,565	34.8%
· 91-180 օր ժամկետանց	405,693	180,001	225,692	44.4%
· 181-360 օր ժամկետանց	249,819	21,851	227,968	8.7%
· 361 օր և ավել ժամկետանց	1,564,765	-	1,564,765	0.0%
Ընդամենը արժեզրկված վարկեր	**16,374,606**	**559,433**	**15,815,173**	3.42%
Ընդամենը վարկեր ընկերություններին	**49,088,798**	**782,662**	**48,306,136**	**1.59%**

	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկում հազ. դրամ	Զուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկում %
Սպառողական վարկեր				
· Ոչ ժամկետանց	12,441,032	101,187	12,339,845	0.8%
· Մինչև 30 օր ժամկետանց	231,720	15,898	215,822	6.9%
· 31-90 օր ժամկետանց	251,973	25,029	226,944	9.9%
· 91-180 օր ժամկետանց	136,150	34,460	101,690	25.3%
· 181-360 օր ժամկետանց	230,615	52,471	178,144	22.8%
· 361 օր և ավել ժամկետանց	331,960	-	331,960	0.0%
Ընդամենը սպառողական վարկեր	**13,623,450**	**229,045**	**13,394,405**	**1.7%**
Էքսպրես վարկեր				
· Ոչ ժամկետանց	3,447,535	86,859	3,360,676	2.5%
· Մինչև 30 օր ժամկետանց	96,791	16,687	80,104	17.2%
· 31-90 օր ժամկետանց	72,842	24,707	48,135	33.9%
· 91-180 օր ժամկետանց	16,010	9,687	6,323	60.5%
· 181-360 օր ժամկետանց	13,332	8,889	4,443	66.7%
Ընդամենը էքսպրես վարկեր	**3,646,510**	**146,829**	**3,499,681**	**4.0%**
Ոսկու գրավով վարկեր				
· Ոչ ժամկետանց	6,177,805	14,377	6,163,428	0.2%
· Մինչև 30 օր ժամկետանց	87,103	6,554	80,549	7.5%
· 31-90 օր ժամկետանց	19,128	3,922	15,206	20.5%
· 91-180 օր ժամկետանց	11,685	5,428	6,257	46.5%
· 181-360 օր ժամկետանց	10,395	7,159	3,236	68.9%
Ընդամենը Ոսկու գրավով վարկեր	**6,306,116**	**37,440**	**6,268,676**	**0.6%**
Հիփոթեքային վարկեր				
· Ոչ ժամկետանց	2,809,035	10,905	2,798,130	0.4%
· Մինչև 30 օր ժամկետանց	51,591	3,353	48,238	6.5%
· 31-90 օր ժամկետանց	61,657	15,064	46,593	24.4%
· 91-180 օր ժամկետանց	42,569	724	41,845	1.7%
· 181-360 օր ժամկետանց	105,093	16,092	89,001	15.3%

· 361 օր և ավել ժամկետանց	231,035	-	231,035	0.0%
Ընդամենը հիփոթեքային վարկեր	**3,300,980**	**46,138**	**3,254,842**	**1.4%**
Գյուղատնտեսական վարկեր				
· Ոչ ժամկետանց	225,841	1,626	224,215	0.7%
· 31-90 օր ժամկետանց	5,200	310	4,890	6.0%
Ընդամենը գյուղատնտեսական վարկեր	**231,206**	**1,936**	**229,270**	**0.8%**
Ավտովարկեր				
· Ոչ ժամկետանց	20,142	529	19,613	2.6%
· Մինչև 30 օր ժամկետանց	2,544	285	2,259	11.2%
· 31-90 օր ժամկետանց	1,485	444	1,041	29.9%
· 181-360 օր ժամկետանց	6,536	3,990	2,546	61.0%
Ընդամենը ավտովարկեր	**30,707**	**5,248**	**25,459**	**17.1%**
Ընդամենը անհատներին տրված վարկեր	**27,138,969**	**466,635**	**26,672,334**	**1.7%**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր հազ. դրամ	**Արժեզրկում հազ. դրամ**	**Զուտ վարկեր հազ. դրամ**	**Համախառն վարկերի արժեզրկում %**
Վարկեր ա/ձ-ին և ընկերություններին				
Վարկեր, որոնց գծով արժեզրկման առանձին հայտանիշ չի հայտնաբերվել	21,228,269	74,168	21,154,101	0.3%
Ժամկետանց կամ արժեզրկված վարկեր				
· Ոչ ժամկետանց	14,247,138	251,756	13,995,382	1.8%
· Մինչև 30 օր ժամկետանց	162,625	813	161,812	0.5%
· 31-90 օր ժամկետանց	605,579	154,657	450,922	25.5%
· 91-180 օր ժամկետանց	88,924	445	88,479	0.5%
· 181-360 օր ժամկետանց	537,476	127,367	410,109	23.7%
· 361 օր և ավել ժամկետանց	1,729,920	230,146	1,499,774	13.3%
Ընդամենը արժեզրկված վարկեր	**17,371,662**	**765,184**	**16,606,478**	4.40%

Ընդամենը վարկեր ընկերություններին	**38,599,931**	**839,352**	**37,760,579**	**2.17%**
	Համախառն վարկեր հազ. դրամ	**Արժեզրկում հազ. դրամ**	**Զուտ վարկեր հազ. դրամ**	**Համախառն վարկերի արժեզրկում %**
Սպառողական վարկեր				
· Ոչ ժամկետանց	12,437,487	75,958	12,361,529	0.6%
· Մինչև 30 օր ժամկետանց	202,168	1,445	200,723	0.7%
· 31-90 օր ժամկետանց	190,763	1,491	189,272	0.8%
· 91-180 օր ժամկետանց	314,833	29,300	285,533	9.3%
· 181-360 օր ժամկետանց	575,576	82,994	492,582	14.4%
· 361 օր և ավել ժամկետանց	432,288	113,012	319,276	26.1%
Ընդամենը սպառողական վարկեր	**14,153,115**	**304,200**	**13,848,915**	**2.1%**
Էքսպրես վարկեր				
· Ոչ ժամկետանց	3,908,461	77,056	3,831,405	2.0%
· Մինչև 30 օր ժամկետանց	79,020	1,949	77,071	2.5%
· 31-90 օր ժամկետանց	81,045	1,845	79,200	2.3%
· 91-180 օր ժամկետանց	13,961	93	13,868	0.7%
· 181-360 օր ժամկետանց	19,815	132	19,683	0.7%
Ընդամենը էքսպրես վարկեր	**4,102,302**	**81,075**	**4,021,227**	**2.0%**
Ոսկու գրավով վարկեր				
· Ոչ ժամկետանց	5,733,385	28,667	5,704,718	0.5%
· Մինչև 30 օր ժամկետանց	50,864	254	50,610	0.5%
· 31-90 օր ժամկետանց	30,379	152	30,227	0.5%
· 91-180 օր ժամկետանց	12,731	64	12,667	0.5%
· 181-360 օր ժամկետանց	11,102	56	11,046	0.5%
Ընդամենը Ոսկու գրավով վարկեր	**5,838,461**	**29,193**	**5,809,268**	**0.5%**
Հիփոթեքային վարկեր				
· Ոչ ժամկետանց	2,646,762	13,553	2,633,209	0.5%
· Մինչև 30 օր ժամկետանց	5,954	30	5,924	0.5%
· 31-90 օր ժամկետանց	27,978	258	27,720	0.9%

· 91-180 օր ժամկետանց	43,755	307	43,448	0.7%
· 181-360 օր ժամկետանց	82,175	411	81,764	0.5%
· 361 օր և ավել ժամկետանց	22,494	112	22,382	0.5%
Ընդամենը հիփոթեքային վարկեր	**2,829,118**	**14,671**	**2,814,447**	**0.5%**
Գյուղատնտեսական վարկեր				
· Ոչ ժամկետանց	224,449	1,122	223,327	0.5%
· 31-90 օր ժամկետանց	153	2	151	1.3%
· 181-360 օր ժամկետանց	2,214	11	2,203	0.5%
Ընդամենը գյուղատնտեսական վարկեր	**226,816**	**1,135**	**225,681**	**0.5%**
Ավտովարկեր				
· Ոչ ժամկետանց	32,384	386	31,998	1.2%
· Մինչև 30 օր ժամկետանց	820	10	810	1.2%
· 31-90 օր ժամկետանց	340	4	336	1.2%
· 91-180 օր ժամկետանց	6,449	77	6,372	1.2%
Ընդամենը ավտովարկեր	**39,993**	**477**	**39,516**	**1.2%**
Ընդամենը անհատներին տրված վարկեր	**27,189,805**	**430,751**	**26,759,054**	**1.6%**

Հաճախորդներին տրված վարկերի վերլուծությունը ըստ տնտեսության ճյուղերի

	31.03.2018թ. հազ. դրամ	31.12.2017թ. հազ. դրամ
Առևտուր և ֆինանսներ	22,423,156	25,728,411
Արդյունաբերություն	2,052,303	2,345,046
Հանգստի կազմակերպման ոլորտ	597,983	685,143
Էներգետիկայի ոլորտ	15,014,703	7,947,148
Շինարարություն	345,272	324,141
Տրանսպորտ և կապ	506,344	604,731
Գյուղատնտեսություն, անտառապահություն և փայտամշակում	34,481	53,117
Սպասարկման ոլորտ	119,871	125,118
Այլ	7,994,685	787,076
Անհատներին տրված վարկեր	27,138,969	27,189,805
	76,227,767	**65,789,736**
Արժեզրկման գծով պահուստ	(1,249,297)	(1,270,103)
	74,978,470	**64,519,633**

Վարկերի գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է՝

	31/03/18թ. հազ. դրամ	31/03/17թ. հազ. դրամ
Սկզբնական Մնացորդ /01 հունվարի /	1,270,103	1,261,500
Տարվա ծախս(հակադարձում)	(332,774)	412,994
Հետհաշվեկշիռ (դուրս գրում)/վերադարձ	311,968	(764,885)
Վերջնական մնացորդ Մնացորդ	**1,249,297**	**909,609**

17. Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

	31/03/18թ. հազ. դրամ	31/12/17թ. հազ. դրամ
- Կառավարության պարտատոմսեր		
ՀՀ կառավարության արժեթղթեր	5,062,484	28,212,994
Ներդրումներ ոչ պետական արժեթղթերում		
Ոչ պետական արժեթղթեր	173,977	1,193,961
Ընդամենը	**5,236,461**	**29,406,955**
Սպասվող պարտքային կորուստ	(30,126)	-
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	**5,206,335**	**29,406,955**



18. Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ

	31/03/18թ. հազ. դրամ	31/12/17թ. հազ. դրամ
Բանկի կողմից պահվող		
- Կառավարության պարտատոմսեր		
ՀՀ կառավարության արժեթղթեր	20,628,380	
ՀՀ ԿԲ արժեթղթեր	-	-
Ընդամենը կառավարության պարտատոմսեր	**20,628,380**	**-**
- Իրավաբանական անձանց պարտատոմսեր		
Իրավաբանական անձանց պարտատոմսեր	1,009,120	-
Ընդամենը իրավաբանական անձանց պարտատոմսեր	**1,009,120**	**-**
Ընդամենը ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	**21,637,500**	**-**
Սպասվող պարտքային կորուստ	(144,410)	
Ընդամենը ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	**21,493,090**	**-**



Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Շենքեր	Վարձակալված գույքի բարելավում	Համակարգիչներ և կապի սարքավորումներ	Տնտեսական գույք	Փոխադրա-միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք/ Վերագնահատված արժեք							
Մնացորդը առ 01 հունվարի 2018թ.	4,396,920	208,321	1,375,133	864,005	95,535	564,635	7,504,549
Ավելացումներ	38,214.00	-	26,678	50,421	-	31,147	146,460
Օտարումներ/դուրսգրումներ	-	-	(634)	(2,370)	(15,442)	(3,934)	(22,380)
Վերադասակարգումներ	-	-	23,497	(23,497)	-	-	-
Մնացորդը առ 31 Մարտի 2018թ.	**4,435,134**	**208,321**	**1,424,674**	**888,559**	**80,093**	**591,848**	**7,628,629**
Մաշվածություն և ամորտիզացիա							
Մնացորդը առ 01 հունվարի 2018թ.	787,945	45,612	831,003	456,711	55,388	293,612	2,470,271
Մաշվածություն և ամորտիզացիա	20,954	2,626	46,380	18,409	1,593	18,134	108,096
Օտարումներ/դուրսգրումներ	-	-	(634)	(1,546)	(15,227)	(3,934)	(21,341)
Վերադասակարգումներ	-	-	249	(249)	-	-	-
Մնացորդը առ 31 Մարտի 2018թ.	**808,899**	**48,238**	**876,998**	**473,325**	**41,754**	**307,812**	**2,557,026**
Հաշվեկշռային արժեք							
Մնացորդը առ 31 մարտի 2018թ.	**3,626,235**	**160,083**	**547,676**	**415,234**	**38,339**	**284,036**	**5,071,603**
Առ 31 դեկտեմբերի 2017թ.	*3,608,975*	*162,709*	*544,130*	*407,294*	*40,147*	*271,023*	*5,034,278*

հազ. դրամ	Շենքեր	Վարձակալված գույքի բարելավում	Համակարգիչներ և կապի սարքավորումներ	Տնտեսական գույք	Փոխադրա-միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք/ Վերագնահատված արժեք							
Մնացորդը առ 1 հունվարի 2017թ.	4,324,746	185,036	1,091,770	776,983	93,763	533,585	7,005,883
Ավելացումներ	-	-	4,411	5,865	-	23,263	33,539
Օտարումներ/դուրսգրումներ	-	-	(48)	-	(16,835)	-	(16,883)
Մնացորդը առ 31 մարտի 2017թ.	**4,324,746**	**185,036**	**1,096,133**	**782,848**	**76,928**	**556,848**	**7,022,539**
Մաշվածություն և ամորտիզացիա							
Մնացորդը առ 1 հունվարի 2017թ.	703,512	35,526	709,224	415,985	75,100	242,130	2,181,477
Մաշվածություն և ամորտիզացիա	22,099	2,369	26,477	15,754	1,028	22,728	90,455
Օտարումներ/դուրսգրումներ	-	-	(34)	-	(16,835)	-	(16,869)
Մնացորդը առ 31 մարտի 2017թ.	**725,611**	**37,895**	**735,667**	**431,739**	**59,293**	**264,858**	**2,255,063**
Հաշվեկշռային արժեք							
Մնացորդը առ 31 մարտի 2017թ.	**3,599,135**	**147,141**	**360,466**	**351,109**	**17,635**	**291,990**	**4,767,476**
Առ 31 դեկտեմբերի 2016թ.	*3,621,234*	*149,510*	*382,546*	*360,998*	*18,663*	*291,455*	*4,824,406*

19. Բռնագանձված ակտիվներ

Գրավի տնօրինման արդյունքում առաջացած հիմնական միջոցներ	31/03/18թ. հազ. դրամ	31/12/17թ. հազ. դրամ
Անշարժ գույք	843,325	749,383
Ընդամենը բռնագանձված ակտիվներ	**843,325**	**749,383**

Բռնագանձված ակտիվները ներառում են գրավի տնօրինման արդյունքում սեփականացված ակտիվներ:

20. Այլ ակտիվներ

	31/03/18թ. հազ. դրամ	31/12/17թ. հազ. դրամ
Կանխավճարներ	289,387	288,253
Նյութեր և պաշարներ	49,131	59,218
Կանխավճարներ այլ հարկերի գծով	31,073	47,370
Կանխավճարներ շահութահարկի գծով	160,845	142,648
Այլ	249,520	372,919
Ընդամենը	**779,956**	**910,408**
Այլ ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	(8,806)	(14,984)
Ընդամենը այլ ակտիվներ	**771,150**	**895,424**



Այլ ակտիվների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

	31/03/18թ. հազ. դրամ	31/03/17թ. հազ. դրա
Սկզբնական Մնացորդ /01 հունվարի /	14,984	2,084
Տարվա ծախս(հակադարձում)	(4,109)	23,177
Հետհաշվեկշիռ (դուրս գրում)/վերադարձ	(2,069)	(9,232)
Վերջնական մնացորդ Մնացորդ	**8,806**	**16,029**

21. Պարտավորություններ բանկերի նկատմամբ

	31/03/18թ. հազ. դրամ	31/12/17թ. հազ. դրամ
Վարկեր բանկերից	5,948,569	1,293,648
Թղթակցային / լորո / հաշիվներ	773,241	774,342
այլ պարտավորություններ	960	-
Ընդամենը պարտավորություններ բանկերի նկատմամբ	**6,722,770**	**2,067,990**



22. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

	31/03/18թ. հազ. դրամ	31/12/17թ. հազ. դրամ
Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ		
- Անհատներ	4,716,469	4,169,516
- Իրավաբանական անձինք	13,396,222	3,532,778
Ժամկետային ավանդներ		
- Անհատներ	43,404,524	43,406,498
- Իրավաբանական անձինք	3,719,627	16,211,405
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**65,236,842**	**67,320,197**



23. Այլ փոխառություններ

	31/03/18թ. հազ. դրամ	31/12/17թ. հազ. դրամ
Վարկեր ֆինանսական կազմակերպություններից	1,880,296	1,990,607
Այլ փոխառություն	175,558	204,856
Ընդամենը այլ փոխառություններ	**2,055,854**	**2,195,463**



24. Բանկի կողմից թողարկված արժեթղթեր

	31/03/18թ. հազ. դրամ	31/12/17թ. հազ. դրամ
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	10,772,193	10,815,059
Ընդամենը Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	**10,772,193**	**10,815,059**



25. Հետաձգված հարկային պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները:

Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն:

Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով:

հազ. դրամ	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2017թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Մնացորդը առ 31 մարտի 2018թ.
Արժեթղթեր	(829,960)	611,976	85,401	(132,583)
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	(22,350)	13,355	-	(8,995)
Հաճախորդներին տրված վարկեր	(1,373,749)	(396,454)	-	(1,770,203)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	31,323	(744)	-	30,579
Այլ ակտիվներ	71,252	52,315	-	123,567
Այլ պարտավորություններ	51,907	37,453	-	89,360
Հաջորդ տարի փոխանցված հարկային վնաս	-	82,992	-	82,992
	(2,071,577)	**400,893**	**85,401**	**(1,585,283)**

26. Այլ պարտավորություններ

	31/03/18թ. հազ. դրամ	31/12/17թ. հազ. դրամ
Մատակարարներին վճարվելիք գումարներ	116,099	133,387
Աշխատավարձ և նմանատիպ վճարներ	217,959	208,053
Վճարման ենթակա հարկեր, բացառությամբ շահութահարկի	818	1,246
Այլ	81,866	82,511
Ընդամենը	**416,742**	**425,197**
Այլ պահուստներ	3,040	-
Ընդամենը այլ պարտավորություններ	**419,782**	**425,197**



27. Բաժնետիրական կապիտալ և պահուստներ

Թողարկված կապիտալ և էմիսիոն եկամուտ

2018թ. մարտի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 33,971,850 հազար դրամ: Համաձայն Բանկի կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 679,437 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 50,000 դրամ անվանական արժեքով:

2018թ. Մարտի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են

Բաժնետեր	Մասնակության չափը (հազար դրամ)	%
ՖԻՍԹՈՔՈ էլ Թի Դի	20,275,550	59.68%
CreditBank S.A.L.	13,696,300	40.32%
Ընդամենը	**33,971,850**	**100%**

2018թ. մարտի 31-ի դրությամբ դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

Պահուստների բնույթը և նպատակը

Շենքերի վերագնահատումից աճ

Շենքերի վերագնահատումից աճը ներառում է շենքերի վերագնահատված կուտակային դրական արժեքը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստը ներառում է իրական արժեքի կուտակային զուտ փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված Բանկի առավելագույն չբաշխված շահույթի չափով:

28. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31/03/18թ. հազ. դրամ	31/12/17թ. հազ. դրա
Կանխիկ դրամական միջոցներ	2,449,510	2,967,268
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	16,425,410	13,916,543
Պահանջներ բանկերի նկատմամբ - նոստրո հաշիվներ	211,478	345,442
Ընդամենը	**19,086,398**	**17,229,253**



29. Վարկային պարտավորվածություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու պարտավորվածություններ: Այս պարտավորվածություններն իրենցից ներկայացնում են հաստատված վարկերի, վարկային քարտերի սահմանաչափերի և օվերդրաֆտների գծով պարտավորվածություններ:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ՝ հաճախորդների պարտավորությունների կատարումն երրորդ անձանց հանդեպ երաշխավորելու նպատակով: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև հինգ տարի:

Վարկային պարտավորվածությունների, ֆինանսական երաշխավորությունների և ակրեդիտիվների հետ կապված Բանկը կիրառում է վարկային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք գործում են հաճախորդներին վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են վարկային պարտավորվածությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում արտացոլված պարտավորվածությունների գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջովին տրամադրված են: Աղյուսակում երաշխավորությունների և ակրեդիտիվների գծով արտացոլված գումարները ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կճանաչվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն պայմանագրային պարտականությունները:

2018 թ. մարտի 31 դրությամբ և 2017 թ. դեկտեմբերի 31 դրությամբ անվանական կամ պայմանագրային գումարները հետևյալն են.

	31/03/18թ. հազ. դրամ	31/12/17թ. հազ. դրամ
Պայմանագրային գումար		
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	488,789	12,516,701
Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածություններ	362,579	5,956,571
Վարկային քարտերի գծով պարտավորվածություններ	1,302,134	1,137,393
Չօգտագործված օվերդրաֆտներ	165,377	157,976
Ընդամենը	**2,318,879**	**19,768,641**



30. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Այլ կապակցված կողմերը ներառում են Խորհրդի և Վարչության նշանակալից ազդեցության ներքո գտնվող կազմակերպությունները և Խորհրդի ու Վարչության անդամների ընտանիքների անդամներին:

Բանկն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլ գործարքներ:

Գործարքների ծավալները, մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ և հաշվետու ժամանակաշրջանի եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2018 թ. Մարտի 31-ի դրությամբ		2017 թ. Մարտի 31-ի դրությամբ	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	**Ղեկավար անձնակազմ և կապակցված կողմեր**	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմ և կապակցված կողմեր
Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվությունում				
Ակտիվներ				
Հաճախորդներին տրված վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	**546,935**	**53,958**	1,628	158,785
Ժամանակաշրջանի ընթացքում տրամադրված	**66,414**	**55,047**	93	52,835
Ժամանակաշրջանի ընթացքում մարված	**(69,018)**	**(45,103)**	(23)	(50,669)
Մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ	**544,331**	**63,902**	1,698	160,951
Արժեզրկման պահուստ	**-**	**(1,328)**	(27)	(1,623)
Մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ	**544,331**	**62,574**	1,671	159,328
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	**203**	**-**	158,685	-
Մուտքեր	**2**	**-**	2,835,262	-
Ելքեր	**(4)**	**-**	(2,893,341)	-
Մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ	**201**	**-**	100,606	-
Պարտավորություններ				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Ավանդներ հունվարի 1-ի դրությամբ	**794,069**	**-**	1,312,625	-
Ժամանակաշրջանի ընթացքում ստացված ավանդներ	**14,909**	**-**	6,304,426	-
Ժամանակաշրջանի ընթացքում մարված ավանդներ	**(15,071)**	**-**	(7,353,705)	-
Ավանդներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	**793,907**	**-**	263,345	-

Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ				
Ավանդներ հունվարի 1-ի դրությամբ	**6,668**	**242,131**	326,878	436,952
Ժամանակաշրջանի ընթացքում ստացված ավանդներ	**39**	**439,495**	374,372	1,095,191
Ժամանակաշրջանի ընթացքում մարված ավանդներ	**(4,787)**	**(429,455)**	(689,976)	(883,118)
Ավանդներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	**1,920**	**252,171**	11,274	649,025
Թողարկված պարտքային արժեթղթեր				
Արժեթղթեր հունվարի 1-ի դրությամբ	**275,094**	**99,086**	328,296	3,691
Ժամանակաշրջանի ընթացքում իրացված(մարված) արժեթղթեր	**2,060**	**(2,295)**	(49,044)	19,866
Արժեթղթեր ժամանակաշրջանի վերջի դրությամբ	**277,154**	**96,791**	279,252	23,557

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ

	01/01/2018թ. – 31/03/2018թ.	**01/01/2017թ. – 31/03/2017թ.**
Աշխատավարձ և պարգևատրումներ	123,708	144,088
Ընդամենը Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	**123,708**	**144,088**

31. Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է հիմնական ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների:

31/03/18	Մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3 ամսից 1 տարի	1-ից 5-տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	ժամկետանց	Ընդամենը
	հազ. դրամ	*հազ. դրամ*	*հազ. դրամ*	*հազ. դրամ*	*հազ. դրամ*	*հազ. դրամ*	*հազ. դրամ*	*հազ. դրամ*
Ակտիվներ								
Կանխիկ դրամական միջոցներ	2,449,510	-	-	-	-	-	-	2,449,510
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	16,203,634	-	-	-	-	123,000	-	16,326,634
Պահանջներ բանկերի նկատմամբ	2,837,754	-	-	-	-	101,261	-	2,939,015
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	6,645	-	-	-	-	-	-	6,645
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	4,105,380	-	-	16,468	-	-	-	4,121,848
Հաճախորդներին տրված վարկեր	2,294,661	8,122,010	38,003,894	20,914,137	5,325,179	-	318,589	74,978,470
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	-	-	-	215,645	4,816,713	173,977	-	5,206,335
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	-	-	610,195	387,131	20,495,764	-	-	21,493,090
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	5,071,603	-	5,071,603
Բռնագանձված ակտիվներ	-	-	-	-	-	843,325	-	843,325
Այլ ակտիվներ	701,404	-	-	-	-	69,746	-	771,150
Ընդամենը ակտիվներ	**28,598,988**	**8,122,010**	**38,614,089**	**21,533,381**	**30,637,656**	**6,382,912**	**318,589**	**134,207,625**

	Մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3 ամսից 1 տարի	1-ից 5-տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	ժամկետանց	Ընդամենը
	հազ. դրամ	*հազ. դրամ*	*հազ. դրամ*	*հազ. դրամ*	*հազ. դրամ*	*հազ. դրամ*	*հազ. դրամ*	*հազ. դրամ*
Պարտավորություններ								
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	5,554,724	22,754	-	1,119,818	25,474	-	-	6,722,770
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	22,519,466	7,986,788	30,877,176	3,393,045	460,367	-	-	65,236,842
Այլ փոխառություններ	30,548	49,227	212,714	1,195,807	567,558	-	-	2,055,854
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ	3,909	-	-	-	-	-	-	3,909
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	66,346	47,149	5,858,098	4,800,600	-	-	-	10,772,193
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	1,585,283	-	-	-	-	1,585,283
Այլ պարտավորություններ	419,782	-	-	-	-	-	-	419,782
Ընդամենը Պարտավորություններ	**28,594,775**	**8,105,918**	**38,533,271**	**10,509,270**	**1,053,399**	**-**	**-**	**86,796,633**
Զուտ դիրք	**4,213**	**16,092**	**80,818**	**11,024,111**	**29,584,257**	**6,382,912**	**318,589**	**47,410,992**

32. Ռիսկի կառավարում

Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարումն էական գործոն է բանկային ոլորտի համար և Բանկի գործառնությունների կարևոր տարր է: Շուկայական ռիսկը, վարկային ռիսկը, իրացվելիության ռիսկը, գործառնական և իրավական ռիսկերը և համբավը վտանգող ռիսկն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Բանկը:

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար՝ սահմանված համապատասխան սահմանաչափերում Բանկի գործունեությունն ապահովելու նպատակով: Ռիսկերի կառավարման վարչության ղեկավարը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման և համապատասխանության ապահովման համար, նա նաև վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման համար ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառումը: Ռիսկերի կառավարման վարչության ղեկավարը ուղղակիորեն հաշվետու է Վարչության նախագահին և անուղղակիորեն՝ Բանկի Խորհրդին: Ռիսկերի կառավարման վարչությունը չի ենթարկվում և հաշվետու չէ համապատասխան ռիսկերն ընդունող բաժիններին:

Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը՝ թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով, կառավարվում ու վերահսկվում են Վարկային կոմիտեների և Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (ԱՊԿԿ) կողմից: Որոշումների կայացմանը գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ Բանկը ստեղծել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված ռիսկին ենթարկվածության չափից և տեսակից:

Ռիսկի թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Բանկի կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում

ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկի նվազեցման ուղղված միջոցառումների նպատակահարմարության աստիճանի որոշմանը: Բացի ստանդարտ վարկային և շուկայական վերլուծությունների իրականացումից, Ռիսկերի կառավարման բաժինը վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը, կազմակերպելով կանոնավոր հանդիպումներ գործառնական միավորների հետ՝ նրանց մասնագիտական կարծիքը ձեռք բերելու համար:

Բանկի ներքին փաստաթղթերի համաձայն՝ Ռիսկերի կառավարման վարչությունը և ներքին աուդիտի բաժինը հաճախ պատրաստում են Բանկի էական ռիսկերին անդրադարձող հաշվետվություններ: Հաշվետվությունները ներառում են դիտարկումներ Բանկի ընթացակարգերի և մեթոդաբանության արդյունավետության գնահատման վերաբերյալ և առաջարկություններ դրանց բարելավման ուղղությամբ:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի, արտարժույթի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների ու արատարժույթի փոխարժեքների տատանումների ազդեցությանը: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն են, որոնք թույլ կտան պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը: Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում ԱՊԿԿ-ն: Շուկայական ռիսկի սահմանաչափերը հաստատվում են ԱՊԿԿ-ի կողմից՝ Ռիսկերի կառավարման բաժնի առաջարկությունների հիման վրա:

Բանկը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների, տոկոսադրույքների, ժամկետայնության, արտարժույթի դիրքերի և վնասի սահմանաչափերի հետ կապված, որոնք կանոնավոր կերպով վերահսկվում, ուսումնասիրվում և հաստատվում են Վարչության կողմից:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Բանկը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Արտարժույթի ռիսկ

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժույթի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում: Թեև Բանկը հեջավորում է իր ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին, այս գործունեությունը չի որակվում որպես հեջավորման փոխհարաբերություն ՖՀՄՍ պահանջների համաձայն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2018թ. մարտի 31-ի դրությամբ:

	ՀՀ դրամ հազ. դրամ	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Ռուսական ռուբլի հազ. դրամ	Այլ արտարժույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Ակտիվներ						
Կանխիկ դրամական միջոցներ	1,061,906	700,008	356,783	314,033	16,780	*2,449,510*
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	8,177,103	5,118,102	3,031,429	-	-	*16,326,634*
Պահանջներ բանկերի նկատմամբ	12,912	2,739,162	125,345	55,958	5,638	*2,939,015*
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	5,752	893	-	-	-	*6,645*
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	4,073,821	48,027	-	-	-	*4,121,848*
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ	34,834,374	31,775,256	7,559,996	808,844	-	*74,978,470*
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆին արդ չափ ակտիվներ	3,093,345	2,112,990	-	-	-	*5,206,335*
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆին ակտիվներ	18,776,578	2,716,512	-	-	-	*21,493,090*
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	5,071,603	-	-	-	-	*5,071,603*
Բռնագանձված ակտիվներ	843,325	-	-	-	-	*843,325*
Այլ ակտիվներ	527,451	194,046	23,755	25,898	-	*771,150*
Ընդամենը՝ ակտիվներ	76,478,170	45,404,996	11,097,308	1,204,733	22,418	*134,207,625*

Պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	1,235,381	3,095,630	2,391,122	637	-	***6,722,770***
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	22,753,897	39,131,939	3,001,756	347,924	1,326	***65,236,842***
Այլ փոխառություններ	1,986,042	69,812	-	-	-	***2,055,854***
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ	3,556	-	-	353	-	***3,909***
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	1,006,348	9,765,845	-	-	-	***10,772,193***
Հետաձգված հարկային պարտավորություններ	1,585,283	-	-	-	-	***1,585,283***
Այլ պարտավորություններ	387,077	23,140	770	138	8,657	***419,782***
Ընդամենը՝ պարտավորություններ	**28,957,584**	**52,086,366**	**5,393,648**	**349,052**	**9,983**	***86,796,633***
Զուտ հաշվեկշռային դիրք առ 31 մարտի 2018թ.	**47,520,586**	**(6,681,370)**	**5,703,660**	**855,681**	**12,435**	**47,410,992**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ՀՀ դրամ	**ԱՄՆ դոլար**	**Եվրո**	**Ռուսական ռուբլի**	**Այլ արտարժույթ**	**Ընդամենը**
	հազ. դրամ	**հազ. դրամ**	**հազ. դրամ**	**հազ. դրամ**	**հազ. դրամ**	**հազ. դրամ**
Ակտիվներ						
Կանխիկ դրամական միջոցներ	1,103,985	477,336	184,141	1,180,917	20,889	***2,967,268***
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	8,793,303	2,522,701	3,120,539	-	-	***14,436,543***
Պահանջներ բանկերի նկատմամբ	20,266	2,629,270	4,152,498	612,374	4,013	***7,418,421***
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	9,952	-	-	-	-	***9,952***

Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	3,114,691	478,176	2,900,619	-	-	*6,493,486*
Հաճախորդներին տրված վարկեր	33,911,664	27,142,141	556,479	2,909,349	-	*64,519,633*
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	23,784,616	5,622,339	-	-	-	*29,406,955*
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	5,034,278	-	-	-	-	*5,034,278*
Բռնագանձված ակտիվներ	749,383	-	-	-	-	*749,383*
Այլ ակտիվներ	637,302	219,968	20,273	17,881	-	*895,424*
Ընդամենը՝ ակտիվներ	**77,159,440**	**39,091,931**	**10,934,549**	**4,720,521**	**24,902**	***131,931,343***
Պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	1,359,000	693,088	15,902	-	-	*2,067,990*
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	22,496,607	42,684,533	1,868,164	270,732	161	*67,320,197*
Այլ փոխառություններ	2,102,404	93,059	-	-	-	*2,195,463*
Ճահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ	229,753	-	-	-	-	*229,753*
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	1,036,968	9,778,091	-	-	-	*10,815,059*
Հետաձգված հարկային պարտավորություններ	2,071,577	-	-	-	-	*2,071,577*
Այլ պարտավորություններ	383,774	27,393	445	5,195	8,390	*425,197*
Ընդամենը՝ պարտավորություններ	**29,680,083**	**53,276,164**	**1,884,511**	**275,927**	**8,551**	***85,125,236***
Զուտ հաշվեկշռային դիրք առ 31 դեկտեմբերի 2017թ.	**47,479,357**	**(14,184,233)**	**9,050,038**	**4,444,594**	**16,351**	**46,806,107**

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները: Բանկը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկը (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար) կառավարելու համար, ներառյալ պորտֆելի կենտրոնացվածության սահմանափակմանը վերաբերող ցուցումները և Վարկային կոմիտեի ստեղծումը՝ վարկային ռիսկն ակտիվորեն վերահսկելու նպատակով: Վարկային ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Վարկային ռիսկի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների ուսումնասիրման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (իրավաբանական անձանց և անհատների) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- պայմանագրային կողմերի, թողարկողների և ապահովագրական ընկերությունների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկերի փաստաթղթավորման պահանջները,
- վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական վերահսկման ընթացակարգերը:

Իրավաբանական անձանց վարկային դիմումները պատրաստվում են հաճախորդների հետ աշխատող մենեջերների կողմից և փոխանցվում են Վարկավորման վարչություն, որը պատասխանատու է իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության կառուցվածքային վերլուծության և ֆինանսական արդյունքների վրա: Այնուհետև, վարկային դիմումը և հաշվետվությունն անցնում են անկախ ուսումնասիրություն Ռիսկերի կառավարման վարչության կողմից, որը տալիս է երկրորդ եզրակացությունը՝ ստուգելով համապատասխանությունը վարկային քաղաքականության պահանջների հետ: Վարկային կոմիտեն ուսումնասիրում է վարկի դիմումը՝ Կորպորատիվ հաճախորդների վարկավորման վարչության և Ռիսկերի կառավարման վարչության կողմից ներկայացված նյութերի հիման վրա: Նախքան Վարկային կոմիտեի վերջնական հաստատումը, առանձին գործարքներն ուսումնասիրվում են նաև Բանկի Իրավաբանական, Հաշվապահական հաշվառման և Հարկային բաժինների կողմից՝ կախված ռիսկերի առանձնահատկություններից:

Բանկը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և վարկառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա:

Անհատների վարկային դիմումներն ուսումնասիրվում են Անհատների վարկավորման վարչության կողմից՝ կիրառելով Ռիսկերի կառավարման վարչության հետ համատեղ մշակած գնահատման մոդելները և դիմումների տվյալների ստուգման ընթացակարգերը:

Բացի առանձին հաճախորդների վերլուծությունից, ողջ վարկային պորտֆելը գնահատվում է Ռիսկերի կառավարման վարչության կողմից՝ վարկերի կենտրոնացման և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

Վարկային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և չճանաչված պայմանագրային պարտավորվածություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Բանկը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է թողարկվող պարտքային արժեթղթերը, այլ բանկերից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերը, հիմնական կորպորատիվ հաճախորդների և անհատների ավանդները, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու արդյունավետ բավարարելու նպատակով:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական միջոցների հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և դրամական միջոցների այս հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտքերի ֆինանսավորման ծրագրերի ապահովում,
- բարձր իրացվելիությամբ ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական միջոցների ներհոսքի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման ծրագրերի անընդհատության ապահովում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության վերահսկում:

Գանձապետարանը գործարար ստորաբաժանումներից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի ու ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Գանձապետարանը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է առևտրական նպատակներով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ Բանկում:

Գանձապետարանը վերահսկում է իրացվելիության դիրքն օրական կտրվածքով և իրականացնում է կանոնավոր "սթրես թեսթերը" իրացվելիության գծով՝ շուկայի սովորական և ավելի խիստ պայմանների տեսանկյունից: Սովորական շուկայական պայմաններում իրացվելիության դիրքի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են վերադաս ղեկավարությանը շաբաթական կտրվածքով: Իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացնում է ԱՊԿԿ-ի կողմից և իրականացվում են Գանձապետարանի կողմից:

Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Բանկը որպես կապիտալ սահմանում է տեղական օրենսդրությամբ առևտրային բանկերի համար որպես բաղկացուցիչ սահմանված հոդվածները:

2018թ. մարտի 31-ի դրությամբ կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշի («կապիտալի համարժեքության ցուցանիշ») նվազագույն մակարդակը կազմում էր 12% (2017թ-ին՝ 12%): 2018թ. մարտի 31-ի և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր սահմանված մակարդակին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի համարժեքության ցուցանիշը:

	Մարտ 2018թ.	Դեկտեմբեր 2017թ.
Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցություն (ընդամենը կապիտալի հարաբերակցություն)	46.64%	35.88%

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ կապված վարկային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները՝ հաշվի առնելով ցանկացած ընդունելի գրավ կամ երաշխիք: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր վնասի առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

Պայմանական դեպքեր

Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանի Հանրապետությունում: Բանկի գույքն ապահովագրված և Բանկն ունի Բանկերս Բլանկետ Բոնդ (Banker's Blanket Bond (BBB)) ապահովագրության պայմանագիր:

Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունները, եթե այդպիսիք լինեն, զգալի բացասական ազդեցություն չեն ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

Հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և ենթարկվում են տարբեր մեկնաբանությունների հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ պատշաճ կերպով է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները: